ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 146-Ա

ԱՎԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վ**արչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության»** մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Ավետ Հայրապետյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. 2026 թվականի հունիսի 15-ից մինչև հուլիսի 17-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ավետ Հայրապետյանին տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Ավետ Հայրապետյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրեն Փառանձեմ Մկրտչյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2026 թվականի հուլիսի 20-ին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12.06.2026

X

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639 **Վ. ԱՐՍԵՆՅԱՆ**

2026 թվական հունիսի 12
ք.Եղեգնաձոր